

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Աշխարհագրության արդի խնդիրներից չէ (չեն).

1. երևույթների հետևանքների կանխատեսումը,
2. հայտնագործությունները և աշխարհի նկարագրությունը,
3. երևույթների բացատրությունները,
4. երևույթների առաջացման պատճառների պարզաբանումները:

2. Ներմուծվող հումքի և վառելիքի հիման վրա պողպատ արտադրող երկրներն են.

- | | |
|--------------------------|--------------------------|
| 1. Բրազիլիան և Ուկրաինան | 2. Իտալիան և Ճապոնիան |
| 3. Ռուսաստանը և ԱՄՆ-ը | 4. Չինաստանը և Լեհաստանը |

3. Տրվածներից ո՞րը Մեծ Բրիտանիայի միացյալ թագավորության պատմական մարզերից չէ.

- | | |
|---------------|--------------|
| 1. Շոտլանդիան | 2. Ուելսը |
| 3. Անգլիան | 4. Իսլանդիան |

4. ՀՀ-ում քիմիական արդյունաբերության զարգացման նախադրյալներից չէ (չեն).

- | | |
|------------------------------|---|
| 1. սև մետաղների ներմուծումը, | 2. քիմիական արտադրանքի նկատմամբ պահանջարկը, |
| 3. բնական գազի ներմուծումը, | 4. պնդաձուլությունից անջատված նյութերն ու գազերը: |

5. Հայկական լեռնաշխարհի միջլեռնային գոգավորությունների անվանումների և դրանց բնութագրությունների համապատասխանությունը ո՞ր շարքում է տրված.

- | | |
|-------------------------|--|
| ա. Կարնո դաշտ | 1. Դաշտի հատակը հարթ է Արևմտյան Եփրատի վերնագավառում, 1800-2000մ բարձրության վրա: |
| բ. Խարբերդի դաշտ | 2. Երկրաշարժավտանգ շրջաններից է և տարածվում է Արևմտյան Եփրատի միջին հոսանքում: |
| գ. Բասենի դաշտ | 3. Այստեղ են միախառնվում Արևելյան ու Արևմտյան Եփրատները և կառուցվել է Քեբանի խոշոր ջրամբարը: |
| դ. Երզնկայի դաշտ | 4. Ծածկված է բերրի սևահողերով և տարածվում է Արաքսի վերին հոսանքի ավազանում: |
| 1. ա-2, բ-4, գ-1, դ-3 | 2. ա-4, բ-1, գ-2, դ-3 |
| 3. ա-1, բ-3, գ-4, դ-2 | 4. ա-3, բ-2, գ-1, դ-4 |

6. Արարատյան դաշտում, Արարատ լեռան ստորոտին, 850 մ բարձրության վրա մթնոլորտային ճնշումը կազմում է 675 մմ սնդիկի սյուն: Մթնոլորտային ճնշումը գագաթին կլինի.

- | | |
|-----------|-----------|
| 1. 430 մմ | 2. 244 մմ |
| 3. 90 մմ | 4. 363 մմ |

7. Խարկով քաղաքում (հս.լ.50°) հունիսի 22-ին, կեսօրին Արեգակի ճառագայթների անկման անկյունը կազմում է

- | | |
|----------|----------|
| 1. 50,5° | 2. 40° |
| 3. 16,5° | 4. 63,5° |

8. Ո՞ր պնդումն է ճիշտ.

1. Հարավային արևադարձի վրա հունիսի 22-ին, կեսօրին, Արեգակի ճառագայթները Երկրի մակերևույթի վրա ընկնում են ուղիղ անկյան տակ:
2. Բևեռային շրջագծի աստիճանային մեծությունը համապատասխանում է ուղեծրի հարթության նկատմամբ երկրագնդի առանցքի թեքության աստիճանային մեծությանը:
3. Բոլոր մոլորակներն Արեգակնային համակարգում ունեն աշխարհագրական թաղանթ:
4. Նույն պահին, աշխարհագրական տարբեր լայնություններում Արեգակի ճառագայթներն ընկնում են նույն անկյան տակ:

9. Բողոքականությունը լայն տարածում չունի.

- | | |
|-------------------------------|-------------------------------|
| 1. ԱՄՆ-ում և Նոր Զելանդիայում | 2. Կանադայում և Ավստրալիայում |
| 3. Մեծ Բրիտանիայում և ՀԱՀ-ում | 4. Բուլղարիայում և Սերբիայում |

10. Ո՞րն է բնության բաղադրիչների ճիշտ գուգորդումը.

1. սավանա-լորենի, հաճարենի-պանդա, պեկարի խոզ,
2. տունդրա-մամուռ, քարաքոս-մրջնակեր, գետաձի
3. խոնավ հասարակածային անտառ-ֆիկուս, կակաոյի ծառ-կապիկ, ցեցե ճանճ
4. տափաստան-շյուղախոտ, փետրախոտ-ընձուղտ, ջայլամ:

11. Երկրներից ո՞րն ունի 100 մլն-ից պակաս բնակիչ.

- | | |
|--------------|---------------|
| 1. Պակիստանը | 2. Բրազիլիան |
| 3. Կանադան | 4. Բանգլադեշը |

12. Բնութագրումով որոշել ուսումնասիրության մեթոդը.

Աշխարհագրական գիտական ճանաչողության այս մեթոդը ծագել է նրա հետ մեկտեղ և հարյուրամյակներ շարունակ եղել է աշխարհագրական գիտելիքների ձեռքբերման միակ աղբյուրը: Ո՞ր մեթոդն է.

- | | |
|------------------------------|------------------|
| 1. դաշտային (արշավախմբային) | 2. նկարագրական |
| 3. համեմատական-աշխարհագրական | 4. քարտեզագրական |

13. ԱՄԵԱՆ-ի մեջ չեն մտնում.

- | | |
|---------------------------|--------------------------|
| 1. Սյանման և Սինգապուրը | 2. Վիետնամը և Ինդոնեզիան |
| 3. Թաիլանդը և Ֆիլիպինները | 4. ԿԺԴՀ-ն և Չինաստանը |

14. «Երկիր-տնտեսական մասնագիտացում ճյուղ» գույգերից ընտրել ճիշտը.

- | | |
|---|------------------------------------|
| 1. Իրան-մեքենաշինություն | 2. Ճապոնիա-նավթարդյունաբերություն |
| 3. Գերմանիա-քիմիական արդյունաբերություն | 4. Իրաք-գունավոր մետաղաձուլություն |

15. Թթվային անձրևների առաջացման պատճառ է (են).

1. մթնոլորտում ածխաթթու գազի առկայությունը,
2. մետաղաձուլական ձեռնարկություններից ծմբային միացությունների արտանետումները,
3. Հյուսիսային Ամերիայում պեստիցիդների չարաշահումը,
4. միջերկրածովյան շրջաններում զբոսաշրջության զարգացումը:

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Լեռը օվկիանոսի ափին է (0 մ բարձրության վրա), 45° աշխարհագրական լայնությունում, 0° ջերմաստիճանի պայմաններում: Մթնոլորտային ճնշումը լեռան գագաթին 300 մմ է: Որոշել լեռան բացարձակ բարձրությունը (մետր):
17. Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հվ.լ.38°, արլ.ե.73°: Որոշել տվյալ վայրի ժամային գոտին:
18. Երկրի բնակչության թիվը 6 մլն է, բնական աճի գործակիցը՝ 15‰: Ո՞րքան է բնակչության բացարձակ աճը:
19. Երկրի գետային տրանսպորտի բեռնաշրջանառությունը 5 մլն տ.կմ է, իսկ բեռների փոխադրման միջին հեռավորությունը՝ 250 կմ: Ո՞րքան է տարեկան փոխադրվող բեռների ծավալը (տոննա):
20. Նավթի համաշխարհային հետախուզված պաշարները կազմում են 133 մլրդ տ., իսկ երկրագնդի բնակչության թիվը՝ 7 մլրդ մարդ: Ո՞րքան է բնակչության ռեսուրսաապահովվածությունը նավթով 1 շնչի հաշվով (տոննա):